Հավելված N 1
Երևանի քաղաքապետի
2021թ. ապրիլի 26-ի
N 1236-Ա որոշման

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՆԱՉ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԾԱՌԵՐԻ ՀԱՏՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑԻՑ ԳՈՅԱՑՈՂ ՓԱՅՏԱՆՅՈՒԹԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳ

1. Սույն կարգով կարգավորվում են Երևան քաղաքի ընդհանուր օգտագործման տարածքներում ծառահատումների իրականացման և դրանցից գոյացող փայտանյութի հաշվառման, ծառահատման տոմսի լրացման, առաջացած փայտանյութի պահպանման հարաբերությունները:

2. Երևան քաղաքի վարչական սահմաններում ընդհանուր օգտագործման կանաչ տարածքներում ծառահատումներն իրականացվում են «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կամ ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների Վարձակալ կազմակերպությունների (այսուհետ՝ Կազմակերպություն) կողմից՝ լիազոր պաշտոնատար անձի թույլտվության հիման վրա:

3. Ծառահատումների իրականացման թույլտվությունները հիմնված են օրենսդրությամբ սահմանված պահանջների վրա:

4. Սահմանել, որ Երևան քաղաքի ընդհանուր օգտագործման տարածքներում առկա հատման (հեռացման) ենթակա ծառերի գույքագրումը և հաշվառումը Կազմակերպությունն իրականացնում է տարեկան երկու անգամ՝ ապրիլի 1-ից 20-ը և սեպտեմբերի 1-ից 20-ը:

5. Գույքագրման արդյունքներով կազմվում է ծառերի հատման (հեռացման) աշխատանքների իրականացման ծրագիր (այսուհետ՝ Ծրագիր): Ծրագրում ընդգրկված յուրաքանչյուր հատման ենթակա ծառի համար լրացվում է հավելված 2-ով սահմանված ձևի ծառահատման տոմս: Ծրագրի իրականացման համար սահմանվում է ժամկետ, որի ավարտից հետո Կազմակերպությունը տեղեկատվություն է ներկայացնում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչություն (այսուհետ՝ Վարչություն):

6. Ծառահատման տոմսը լրացվում է Կազմակերպության կողմից:

7. Ծառահատման տոմսերը հաշվառման ենթակա փաստաթղթեր են, որոնք ունեն համարակալում և կազմված են երկուական օրինակից: Ծառահատման տոմսերի համարակալումն իրականացվում է Վարչության կողմից: Հաստատված և համարակալված օրինակներից մեկը տրամադրվում է Կազմակերպությանը, մյուսը՝ պահվում է Վարչությունում՝ հատված ծառերի և փայտանյութի ծավալի հաշվառումը վերահսկելու նպատակով:

8. Չկատարված ծառահատումների դեպքում հաստատված ծառահատման տոմսերը վերադարձվում են Վարչությանը և խոտանվում:

9. Ծառահատման տոմսում պարտադիր կցվում են լուսանկարներ, որոնցում պետք է արտացոլվեն այն հատվածները, որոնք ցույց են տալիս ծառի հատման կամ հեռացման ենթակա լինելը, ինչպես նաև՝ ծառի ամբողջական տեսքը:

10. Ծրագիրը և ծառահատման տոմսերը համապատասխանաբար մինչև մայիսի 1-ը և մինչև հոկտեմբերի 1-ը ներկայացվում են Վարչության պետի հաստատմանը:

11. Ծրագրերը և ծառահատման տոմսերը Վարչության պետի կողմից քննարկվում են ներկայացման պահից 10-օրյա ժամկետում:

12. Ծառահատման տոմսի հաստատումից հետո Կազմակերպությունը կազմակերպում և իրականացնում է տվյալ ծառի հատման կամ հեռացման հանրային իրազեկումը:

13. Հանրային իրազեկումն իրականացվում է հատման (հեռացման) ենթակա ծառի վրա հավելված 3-ով սահմանված ձևաչափով՝ ծանուցման թերթիկի առնվազն տասնհինգ օր առաջ փակցման միջոցով:

14. Արտակարգ իրավիճակների հետևանքով տապալված կամ խիստ վտանգավոր իրավիճակների դեպքում արտակարգ պատահարների կանխարգելման նպատակով վթարային, տապալման ենթակա ծառերի հեռացումն իրականացվում է առանց նախապես հաստատված ծառահատման տոմսի: Այդպիսի դեպքերում ծառահատման տոմսը ներկայացվում և հաստատվում է տապալված, վթարային ծառերի հեռացումից հետո:

15. Փայտանյութի ծավալը հաշվարկվում է համաձայն Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի 2013 թվականի մայիսի 6-ի N80-Ն հրամանի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Դ. ՀԱՄԲԱՐՑԱՆ